ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 229– Ա 12 հունիսի 2020 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 65-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի, 56-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1831-Ա որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 304-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը՝ կանոնադրության 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1. կետը հետևյալ բովանդակությանբ՝

«2.1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 06.12.2002թ. գրանցման թիվ՝ 58.210.00295, ՀՎՀՀ 08802804, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղաքար, 1-ին փողոց, 3-րդ շենք) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում)»:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Սոնիկ Ավդալյանին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ.Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության լրացումների պետական գրանցումը՝ կազմակերպության միջոցների հաշվին:

2) Կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002 թվականի նոյեմբերի 20-ի N 146 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 65-Ա որոշումը:

5. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Արմեն Զոհրաբյանին:

12.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ

Կազմված է 13.02. 2020թ
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ ----------

Հավելված

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020թ հունիսի 19-ի
N 229-Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Գ.ՍԱՊՈՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից 13.01.2003թ
գրանցման համար 58.210.00315
ՀՎՀՀ 08803205

13.11.2017թ գրանցված
կանոնադրության թիվ ----------
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«_____» _____ **2020թ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/փոփոխություն/

Կազմակերպության կանոնադրության 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1. կետը հետևյալ բովանդակությանբ՝

«2.1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի Կ. Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 06.12.2002թ. գրանցման թիվ՝ 58.210.00295, ՀՎՀՀ 08802804, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Գեղաքար, 1-ին փողոց, 3-րդ շենք) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան (միացում):»